ԻՄԱՍՏՈՒՆ ՏԻՐԱՑՈՒՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի մարթ ու կնիկ են ըլըմ, իրեք ըրեխա են ունենըմ։ Ամենաքասըբնու քասիբն են ըլըմ։
Կնիկն ասըմ ա.— Այ մարթ, էսա կարըմ չենք ապրինք, գնա տերտերի ձեռն ու ոտն ընգի, բալի մի էրկու խզմզորիկ անե, քի տա, մի փլասըմ փթաթե, տար կնանոնցն ասա՝ գրբաց եմ, բալի մի բան տան՝ ապրինք։
Ասըմ ա.— Ա՜ տնաքանդ, գիր չի գիդեմ, սև ու սպիտակը ջգըմ չեմ, գնամ ի՞նչ անեմ։
Ասըմ ա.— Բան չի կա, աստոծ ըղորմած ա, հլբաթ մի բան դուս կգա՛, գնա, փոշմանիլ չես։
Մի ղշահապկա էլ կարըմ ա, կոխկիցը քաշ անըմ, զոռով էն նաչարին բոթբթոտելով ղրգըմ ա։
Գնըմ ա տերտերին ղանչանք անըմ ա, տերտերն էլ մի էրկու խզմզորիկ անըմ ա, մի փալասըմ փթաթորում, ասըմ ա.— Գնա, ա՜, տնաքանդ, ըրեխեքդ սոված կտորվում են, բալի մի կտոր հաց իրաց անես, ըրեխեքդ պահես։
Էն գիրը վի կալած, դա վի ա կենըմ՝ գնըմ ա։ Գնըմ ա, գնըմ, մի ծմակըմ, թալի կես տեղը, տենըմ ա՝ հրես մի ուխտ բարցած՝ նստած ա։ Վախըմ ա թե մոդ գնա, ասըմ ա.—Ո՞վ գիդե, ի՞նչ ա վրեն բարցած, տերը դուս կգա խայտառակ կանե։ Աղաք ա գնըմ, տենըմ ա՝ հրես էն ուխտին ոնց են ման գալի։
Դրան հարցնըմ են, ասըմ են.— Դու ի՞նչ մարթ ես։
Ասըմ ա.— Ես գրբաց եմ։
Ասըմ են.— Դե հլա գիրդ բաց արա, մեր ուխտը կորել ա, տես հլա ո՞րդի ա։
Դա փալասը բաց ա անըմ, գրին մտիկ անըմ, ասըմ ա.— Հրեն ձեր ուխտը էն թալըմը նստած։
Ասըմ են.— Ընդի շատ ենք մտիկ արել։
Ասըմ ա.— Գնացեք, թե ընդի չլի, էկեք իմ աչու ձեռը կտրեցեք։
Էնա գնըմ են ու գդնըմ։ Էն ուխտի վրա էլ թաքավորի խազինեն ա ըլըմ բարցած։
Դրանք ասըմ են.— Էս իմաստուն մարթին մենք բաց չենք թողուլ, սրան տանինք թաքավորի կուշտը։
Էնա մի քսան-եռեսուն մանեթ են տալի։ Սա վազելով տանըմ ա կնգանն ա տալի։
Կնիկն ասըմ ա.— Ա՛յ մարթ, տեհա՞ր որ ասի աստոծ ըղորմած ա։ Գնա՛, այ մարթ, գնա վախիլ մի։
Ենա եդ վի ա կենըմ, գնըմ, ասըմ ա.— Հլա գնամ տենամ թաքավորն ի՞նչ պտի տալ, որ ուխտը գդել եմ։
Հետներուն տանըմ են թաքավորի կուշտը։
Ասըմ են.— Թաքավորն ապրած կենա, էս մարթն իմաստուն ա, սհե-սհե, մեր ուխտը գդել ա։
Ասըմ ա.— Դե սրան բաց մեք թողուլ, գնացեք սրա ըրեխանցն ու կնգանն էլ բերեք։
Ձիան են վի ունըմ, գնըմ են՝ բերըմ։
Մի օթախ են տալի, միչին դնըմ են, մի սուրու էլ ապրուստ են տալի, պհըմ։
Օրի մի օրը թաքավորի կնիկն իմանըմ ա, որ սհենց իմաստուն մարթ ա էկել։
Իրան քոծին ղրգըմ ա, ասըմ ա.— Իմ նշանի մատնուքը կորել ա, ինչ ուզենա՝ կտամ, թող գա գդնի։
Դա կնգանն ասըմ ա.— Բա հմի բան չգիտեմ, գնամ ի՞նչ անեմ, ա տնաքանդ։
Ասըմ ա.— Վախիլ մի՛, գնա՛ աստոծ ըղորմած ա։
Մատնիքն էլ, էն կրակի էկած, քոծն ա գողացած ըլըմ։
Ասըմ ա.— Տիրացու ջան, գլխիդ ու արևիդ մատաղ ըլիմ, մատնուքը ես եմ վի կալել, հմի ըմանչըմ եմ՝ թե իրան տամ։ Ես գիդեմ գալ տիս ինձ ըռեխ տիս տալ, ախպեր ինչ ուզենաս՝

կտամ, ինձ ըռեխ մի տալ։ Էն մատնիքը տանինք մի ղազի կուլ գձիլ տանք, էնա դուն արի գրիդ մտիկ արա, ասա.— Ղազի փորումն ա։
Վի են կենըմ, գնըմ։
Ասըմ ա.— Տիրացու ջան, իմ նշանի մատնուքը կորել ա, գդի, ինչ ուզենաս, քի կտամ։ Հմա որ գդնես ոչ, ես բողմի կգամ։
Էն քոծը մատնուքը տարած ա ըլըմ մի չոլախ ղազի կուլ գձիլ տված ա ըլըմ։
Էն կրակի էկածը, մթամ գրին մտիկ ա անըմ, ասըմ ա.— Դու գլուխդ լվանալիս ես էլել, հանել ես՝ գրել ըստոլի վրա, կուռդ դիբել ա, վեր ա ընգել, ձեր չոլախ ղազն էկել ա կուլ գձել, հրե քչըմն ա։
Ասըմ ա.— Ախչի-ախչի, գնա ղազը բի։ Գնըմ ա բերըմ, մորթըմ են, դրուստ որ մատնուքը հանըմ են։
Ասըմ ա.— Վա՜յ, ես քու գլխին ու արևին մատաղ, տիրացու ջան։ Եդնա մի սուրու փող ա տալի, գնըմ ա։
Ուրախանաս՝ ինչ կնիկն ուրախանըմ ա։
Ասըմ ա.— Բա որ ասեի, դու հլե ցավոտըմ ես։
Դրանք մի բոլ հարստանըմ են։
Մի օր էլ էդ գեղըմը մի ժամ են շինըմ, մի քանի տավար են մորթըմ, պղնձնին լիքը խորակ են էփըմ, որ ժամն օծեն, եդնա քեփ անեն։ Էդ տիրացվին էլ կանչըմ են, տանըմ վերի ծերին նըստացնըմ, որ դա էլ խալխի ըղաքին օխնիլ տի ժամը։ Էդ կրակի էկածը մի բան էլա գիդե ոչ։
Ասըմ ա.— Հմի ես ի՞նչ անեմ։
Մըն էլ եդ ա մտիկ անըմ, էնքան խալխը տենըմ ա թե չէ, սիրտը պատռըմ ա։ Ասըմ ա.— ես փախչիլ տիմ, ջհանդամը, թե ինձ եդնա կսպանեն։
Վի ա կենըմ ու փախչըմ։ Դրան որ փախչելիս տենըմ են հա, խալխը եդնեն չիմ դուս ա դառնըմ, որ սրան բռնե։ Հլե չիմ դուս են գալի թե չէ, ժամը չոքըմ ա, փուլ ա գալի։
Էնա նոր գնըմ են սրա ոտն ու ձեռն ընգնըմ, ասըմ են.— Ըշխարի ըրեսին սհե իմաստուն մարթ, մին էլ սա յա։
Էնա էն գեղըմը դառնըմ ա իմաստուն, թաքավորի բարեբար մարթ։ Բախտավորվիս, ինչ բախտավորվըմ ա։